

Գևորգ Ս. Ստեփանյան  
Պատմ. գիտ. դոկտոր

**1921 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 14-18-Ի  
ԻՐԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆՏՈՒՄ**

Նոր մանրամասներ Հայիեղկոմի ոճրագործությունների վերաբերյալ\*

**Բանալի բառեր** – Հայիեղկոմ, ՀՅ Դաշնակցություն, չեկա, ձերբակալություն, բանտարկություն, գնդակահարություն, կացնահարություն:

1920 թ. դեկտեմբերի 2-ին, ժամը 13-ին, Երևանում, ՀՀ կառավարության ներկայացուցիչներ Դրաստամատ Կանայանի (Դրո) ու Համբարձում Տերտերյանի և Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի միջև ստորագրված 8 կետից բաղկացած համաձայնագրով Հայաստանի իշխանությունը խաղաղ ճանապարհով անցավ Ռազմահեղափոխական կոմիտեի (ՀՌՀԿ կամ Հայիեղկոմ) ձեռքը: Համաձայնագրի 4-րդ և 5-րդ հոդվածներում ասվում էր, որ Ռուսաստանը և Հայիեղկոմը պարտավորվում են բռնություններ չգործադրել զինվորական կազմի, նախկին կառավարության անդամների և ՀՅԴ գործիչների նկատմամբ<sup>1</sup>:

Սակայն բոլշևիկները չկատարեցին դեկտեմբերի 2-ի համաձայնագրի և ոչ մի կետը: Արդեն դեկտեմբերի 2-ին ստորագրվել էր հրամանագիր՝ Հ. Օհանջանյանի կառավարության անդամներին ձերբակալելու մասին: Այդ նպատակով Բաքվից հատուկ առաքելությամբ Երևան ժամանած Ե. Վանիկին Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը դեկտեմբերի 2-ին տվել էր մանդատ՝ «ՀՀ նախկին կառավարության անդամներին և այլ անձանց ձերբակալելու մասին»<sup>2</sup>: **Բաքվում** ձևավորված և ռուսական 11-րդ Կարմիր բանակի օգնությամբ իշխանությունը զավթած Հայիեղկոմի Երևան ժամանումից (դեկտեմբերի 4) մի քանի օր անց կազմալուծվեց Հայաստանում գործող պետական համակարգը<sup>3</sup>: Հայիեղկոմի առա-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 1.09.2015:

1 Տե՛ս **Շահան**, Երևանի համաձայնագիրը, Բոստոն, 1941, էջ 25-27:

2 Տե՛ս **Վիրաթյան Ա.Հ.**, Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «ԲՀԱ» Եր., 2009, N 1, էջ 109:

3 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 116, ց. 1, գ. 2, թ. 24, տե՛ս նաև ց. 3, գ. 1,

Հ (ԺԳ) ցաթի, թիվ 3 (51) հուլիս-սեպտեմբեր, 2015  
ՎԿ համահայկական հանդես

ջին միջոցառումներից մեկը Ս. Կասյանի 1920 թ. դեկտեմբերի 6-ի ստորագրած դեկրետով «Արտակարգ հանձնաժողովի»՝ **չեկայի** ստեղծումն էր<sup>4</sup>: Դեկտեմբերի 19-ի դեկրետներով Հայիեղկոմին կից ստեղծվեց «Հեղափոխական գերագույն տրիբունալը», իսկ արդարադատության ժողովմատրիին կից՝ «Հեղափոխական տրիբունալը»<sup>5</sup>: Բոլշևիկները նպատակ ունեին Հայաստանում իշխանափոխությունը կատարել քաղաքացիական կռիվի, արյունահեղության, դասակարգային պայքարի հրահրման ճանապարհով: Երկրում ծայր առան ազգային գործիչների համատարած ձերբակալությունները, որոնք իրականացվեցին մի քանի հանգրվանով՝ 1920 թ. դեկտեմբերին, 1921 թ. հունվարի վերջերին և փետրվարի սկզբներին:

Շարունակվող բռնությունների և ձերբակալությունների հետևանքով 1921 թ. փետրվարին չեկայի, Զինվորական և Երևանի կենտրոնական բանտերը լեցուն էին քաղբանտարկյալներով: Նրանց թվի վերաբերյալ հուշագիր-հեղինակների մոտ առկա են հակասական տվյալներ: Հ. Կոստյանի տեղեկացմամբ բանտարկվածների թիվն անցում էր 1200-ից<sup>6</sup>: Երևանի բանտից հրաշքով փրկված «Վերապրող» ծածկանունով հեղինակն իր հուշերում գրում է, որ դեկտեմբերի 15-ից մինչև փետրվարի 18-ը բանտարկված էին մոտ 1500 հոգի<sup>7</sup>: Այլ աղբյուրներով Երևանի բանտում կալանավորների թիվը հասնում էր 2200-2500-ի, բացի չեկայի բանտում գտնվողներից<sup>8</sup>: Ըստ այդմ՝ Երևանի բանտում գտնվում էին 900, Էջմիածնում՝ 400, Ախտալում՝ 150, Աշտարակում՝ 270, Ելենովկայում՝ 30, Նոր Բայազետում՝ 150, Ղանարյուում (այժմ՝ Արտաշատ)՝ 120 հոգի<sup>9</sup>: Վլ. Ղազախեցյանի վկայակոչած տվյալների համաձայն՝ փետրվարի 11-ի դրությամբ բանտարկյալների ընդհանուր թիվը հասել էր մինչև 3000-ի<sup>10</sup>:

Չեկայի բանտում երեք օր տևած հարցաքննություններից հետո ձերբակալվածների մեծ մասին տեղափոխում են Երևանի կենտրոնական բանտ<sup>11</sup>: Նրանց մեջ էին Նոր Բայազետի սահմանապահ գործերի հրամանատար Համազասպ Արվանձտյանցը, ՀՀ բանակի սպա սեբաստացի Վարդան Թելլայանը (Վ. Բակուր), Վ. Նավասարդյանը, Ն. Աղբալյանը, Լ. Շանթը, Ավ. Սահակյանը, ՀՀ բանակի դերակալ գեներալ Նիկ. Ղորղանյանը, բաշգառնեցի խմբապետ Մակեդոն Հակոբջանյանը, Գևորգ Դեմիրճյանը և ուրիշ նշանավոր դեմքեր<sup>12</sup>: Այստեղ նրանք պահվում էին բանտային խիստ ուժեղ պայմաններում: Բավական է նշել, որ շատ դեպքերում 20-25 հոգանոց բանտախցերում տեղավորում էին 70-80 հոգու<sup>13</sup>:

Հայիեղկոմի վարած ահաբեկչական քաղաքականությունը աննկարագրելի հուզում և արդար ցասում էր առաջ բերել Երևանում և գավառներում: Բանտարկյալներին կարող էր փրկել միայն երկրում հասունացող ապստամբությունը: Փետրվարյան համաժողովրդական ապստամբությունը սկսվեց տարերայնորեն, սակայն ժամանակի ընթացքում ընդունեց կազմակերպված բնույթ՝ ընդգրկելով Կոտայքը, Գառ-

թ. 97:

4 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 3, գ. 4, թ. 6, տե՛ս նաև **Ղազախեցյան Վ.**, Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, ԲՀԱ, Եր., 2011, N 1, էջ 45:

5 ՀԱԱ, ֆ. 116, ց. 3, գ. 1, թ. 26:

6 Տե՛ս **Կոստյան Հ.**, «Բանտի քարերն էին աղաղակում»... Փետրուարեան ընդվզումի 30-րդ տարեդարձին առթիւ (1921-1951), Գահիրէ, 1951, էջ 44:

7 Տե՛ս **Վերապրող**, Բանտի յուշեր. Փետրուարեան յեղաշրջումի առթիւ, «Ալիք», Թեհրան, 1956, ԻԶ տարի, փետրուար 17, N 39:

8 Տե՛ս **Սասունի Կ.**, Փետրուարեան ապստամբութիւնը (1921), Պէյրուք, 1970, էջ 118, տե՛ս նաև **նույնի՝** Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, նոյնբեր, N 1, էջ 99:

9 Տե՛ս **Սասունի Կ.**, Փետրուարեան ապստամբութիւնը (1921), Պէյրուք, 1970, էջ 118:

10 Տե՛ս **Ղազախեցյան Վ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 48:

11 Տե՛ս **Խաչատրեան Ս.**, Տպարտութիւններ բանտից, «Ազատ Հայաստան», Եր., 1921, փետրուարի 22, N 3, տե՛ս նաև **Քաջագունի Յովհ.**, Ցեռ մահու: Պատմուածքներ, յուշեր, յոգումներ, նամակներ: Հրատարկութեան համար պատրաստեց՝ **Ս. Վրացեան**, Պէյրուք, 1968, էջ 78:

12 Տե՛ս **Կոստյան Հ.**, «Բանտի քարերն էին աղաղակում»... էջ 38-39:

13 Տե՛ս **Իշխանեան Բ.**, Երկու ամիս բոլշևիկեան բանտում, Գահիրէ, 1924, էջ 146:

նին, Բաշ-Ապարանը և այլ շրջաններ: Կոտայքի Զառ գյուղում փետրվարի 11-ին<sup>14</sup> (որոշ հեղինակների մոտ՝ 12-ին<sup>15</sup>, 13-ին<sup>16</sup>) «Երևանի փրկության կոմիտե»-ի նախաձեռնությամբ և ՀՅԴ Հայաստանի կոմիտե անդամ Իրազեկի (Հ. Տեր-Հակոբյան) նախագահությամբ տեղի ունեցած ՀՅԴ ղեկավար գործիչների ու խմբապետների գաղտնի ժողովը, հաշվի առնելով բոլշևիկյան իշխանության կողմից ժողովրդի նկատմամբ «փետրուարի սկզբներին սկսած խելագար հալածանքները և գաղտնի գնդակահարությունները»<sup>17</sup>, որոշում է՝ փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը «ընդհանուր ապստամբություն առաջ բերել»<sup>18</sup>:

**Նման պայմաններում թեև չեկան սկզբնապես որոշել էր ՀՅԴ անդամների գնդակահարությունները սկսել քաղաքական գործիչներից, սակայն Փետրվարյան ապստամբության նախօրեին փոխում է իր մտադրությունը և կոտորածը սկսում է զինվորականներից:** «Փոխանակ քաղաքական գործիչներէն սկսելու կոտորածը, գրում է Արտ. Չիլինգարյանը, աւելի ստիպողական նկատած էին ամէնէն առաջ կոտորել բանտի մէջ եղած բոլոր զինուորականները, որովհետև անոնք ողջ մնալու պարագային կրնային ռազմապէս ղեկավարել ապստամբութիւնը... Սակայն, կասկած չկայ, որ եթէ չբռնկէր ապստամբութիւնը, բոլշևիկները ամէնէն առաջ պիտի փութային ոչնչացնել մեր խուրճի մէջ բանտարկուածները և ոչ թէ զինուորական կամ առհասարակ գէնքի հետ գործ ունեցող բանտարկեալները»<sup>19</sup>:

Չեկան փետրվարի 14-ից Երևանի կենտրոնական բանտում առանց քննության և դատավճռի դավադրաբար սկսում է գաղտնի գնդակահարությունները, որոնց զոհ են գնում հայ մտավորականության ներկայացուցիչները և աչքի ընկնող դաշնակցականներ<sup>20</sup>: Փետրվարի 14-ի լույս 15-ի գիշերը գնդակահարվեցին 18 հոգի<sup>21</sup>: Գնդակահարություններից հետո չեկան Երևանի գլխավոր փողոցների պատերին փակցնում է հայտարարություններ, որոնցում նշված էին յուրաքանչյուր գիշերվա ընթացքում գնդակահարվածների անունները<sup>22</sup>: Փաստերը վկայում են, որ բանտարկյալների սպանող նախօրոք ծրագրված նպատակ է եղել բոլշևիկների համար: Այսպես՝ Փետրվարյան ապստամբությունից հետո, երբ գրավվում է Երևանի բանտը, «Հայրենիքի փրկության կոմիտեի» ձեռքն են անցնում փաստաթղթեր, որտեղ ցուցակագրված էին սպանողի ենթակա բանտարկյալները: Այդ մասին է վկայում ղեաքների ժամանակակից-ականատես, ՀՀ բանակի սպա Հովհաննես Սահակյանը: «Զօրաւոր փաստաթուղթեր գտնուեցան, գրում է Հովհ. Սահակյանը, որոնք կը հաստատեն թէ բանտարկեալները հերթի դրուած էին: Ամէն գիշեր 20-30-40 հոգի պիտի սպաննուէին Փետրուար 13, 14, 15, 16, 17-ի գիշերներուն պիտի յաջորդէին դեռ շատ մը ոճիրի սև գիշերներ...»<sup>23</sup>: Իր զագրելի և եղեռնական արարքի հետքերը քուղարկելու համար չեկան Երևանի կենտրոնական բանտի նկուղներում վստահելի և

14 Տես Վրացեան Ս., Կեանքի ուղիներով (Դէպքեր, դէմքեր, ապրումներ), հատ. Զ, Պէյրուօ, 1967, էջ 22:

15 Տես Հակոբյան Ա., 1921 թ. Փետրվարյան իրադարձություններում «Կարմիրների» և ապստամբների զինուժի մասին հայ պատմագրության մեջ, ՊԲՀ, Եր., 2011, N 2, էջ 13:

16 Տես Ղազախեցյան Վ., Գևորգյան Հ., Դաշնակցության կողմից Փետրվարյան ապստամբության ղեկավարման հարցի շուրջ (տրահայտ վավերագրեր), ԲՀԱ, Եր., 2003, N 1, էջ 47:

17 Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, նոյեմբեր, N 1, էջ 88:

18 Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 527:

19 Դարբինեան Ռ., Կեանքի գրքէն, Երկեր, հատ. Ա (վեցերորդ մաս. Դէպի Հայաստան), Պէյրուօ, 1979, էջ 563-564:

20 Տես Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, նոյեմբեր, N 1, էջ 99, տե՛ս նաև Մելքումեան Խ., Փետրուար 18-ը, «Յուսաբեր», Գահիրէ, 1949, ԼԴ տարի, փետրուար 19, N 275:

21 Տես Ինչպէս տեղի ունեցաւ հակապօլշեիկ ապստամբութիւնը Հայաստանի մէջ (Ականատեսի մը պատմութիւնները), «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, մայիս 19, N 759:

22 Տես Արշակունի Ա. [Արշակ Հովհաննիսյան], Փետրուար 18-ի ապստամբութիւնը: Հայ հերոսական պատմութեան մի դրուագ, «Յուսաբեր», Գահիրէ, 1949, ԼԴ տարի, փետրուար 19, N 275:

23 Սահակեան Յովհ., Էջեր մեր ազատագրական պատմութենէն (Ա): Երկու տարի Հայկական բանակի մէջ, Փարիզ, 1937, էջ 173:

հավատարիմ «բանուոր աշխատատեղեր»-ի միջոցով գիշերվա ժամերին նախապես փորել էր տվել հորեր՝ «մահուան գուբեր»<sup>24</sup>, որտեղ պետք է լցվեին սպանվածների դիակները:

Փետրվարի 16-18-ը Երևանի կենտրոնական բանտի ամենածանր օրերն էին: Չեկան որոշել էր փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը վերսկսել գնդակահարություններն ու սպանողը: «Հայրենիքի փրկության կոմիտեի» ձեռքում հայտնված մի փաստաթղթում ասվում է, որ չեկան և Հայաստանում տեղակայված 11-րդ Կարմիր բանակի «Հատուկ բաժին»-ը (անվանվել է նաև զինվորական չեկա)<sup>25</sup> փետրվարի 15-ի համատեղ նիստում որոշել էին կենտրոնական բանտի այն 21 մարդկանց անունները, ովքեր պետք է գնդակահարվեին: Որոշումն ի կատար ածելու համար չեկայի պարտին տրվել էր թիվ 11 հրամանը<sup>26</sup>:

Ուստի շրջաններում ու գյուղերում տեղական իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով և Հայաստանի մեծ մասն ազատագրելով բոլշևիկներից՝ ժողովրդական ապստամբ ջոկատները տարբեր ուղղություններով փետրվարի 17-ի երեկոյան արդեն մոտեցել էին Երևանին և օղակել քաղաքը<sup>27</sup>: Սակայն փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը Երևանում սկսվում է մի սարսափելի ձյունամրրիկ և այնքան առատ ձյուն է գալիս, որ մեկ օրով հետաձգվում է Երևանի և կենտրոնական բանտի ազատագրման ծրագիրը: Ինչպես վերիշում է Ալյան Ստեփանյանը. «Փետրվար 16-ին, չորեքշաբթի, ուշ երեկոյեան յանկարծ սկսեց մի տոսկալի ցրտաշունչ քամի և ապա սաստիկ փոթորիկ, որին յաջորդեց մրրկախառն ուժեղ ձիւն, որ գնալով աւելի սաստկացաւ: Կէս գիշերայ մօտ էր արդէն, մէկ ժամայ ընթացքում այնքան առատ ձիւն եկաւ, որ դաշտերն ու ճամբաները և մինչև անգամ խճուղիները ծածկւեցին ձիւնի թանձր շերտերով»<sup>28</sup>:

Չեկան, օգտվելով այդ առիթից, արտաքին աշխարհից մեկուսացած բանտում Հայիեղկոմի ընդհանուր հրահանգով սկսում է իրականացնել նախօրոք մշակած իր դիվային ծրագրերը: Ոճրագործությունը սկսելուց առաջ, փետրվարի 16-ի երեկոյան, բանտ է այցելում ազգուրաց բոլշևիկ Ա. Նուրիջանյանը, ում հրահանգով և անձնական մասնակցությամբ ժամը 11-ին բանտային վարչությունը՝ տեսուչը, կոմիսարը, բանտապետը և օգնականները, նախապես կազմած ցուցակով բանտախցերից սկսում են դուրս հանել բանտարկյալներին<sup>29</sup>:

Վրա հասավ մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող՝ անմեղ բանտարկյալների գանգվածային բնաջնջումը: Բանտի գրասենյակներից մեկում բանտարկյալներին կենտրոնացնելուց հետո՝ պատուհաններից սկսում են նրանց գնդակահարել: Արյունոտ խրախճանքն անձամբ ղեկավարում էին դահձապետեր Ավիսը, արդարադատության ժողկոմ Սարգիս Բաղդադյանին փոխարինած ազգությամբ թուրք Սուլեյման Նուրին և չեկայի նախագահ Շ. Ամիրխանյանը:

Կրակոցների և գնդակահարվողների ձայները դրսում չլսվելու համար բանտապետի հրահանգով բանտի շրջակա փողոցներում շարժիչները միացված կանգնեցվել էին բեռնատար ավտոմեքենաները, «...որոնք անդադրում իրենց շչակներն էին հնչեցնում, ուժգին աղմկում, որպեսզի համազարկների ձայները, բանտարկյալների աղաղակները խեղդեն ժխորի մէջ, մերձակայքի և քիչ հեռավորութեան վրայ եղող բնակիչները չիմանան բանտում գործուած զարհուրելի սպանողը: Այս

24 Տե՛ս **Կոստյան Հ.**, «Բանտի քարերն էին աղաղակում»... Փետրուարեան ընդվզումի 30-րդ տարեդարձին առթիւ (1921-1951), Գահիրէ, 1951, էջ 44, 63, տե՛ս նաև **Բիւզանդ Է.**, Հայուիները Երևանի «Չեկայ»-ի բանտում (II), «Հայրենիք», Պոսթրն, 1965, ԽԳ տարի, սեպտեմբեր, N 9, էջ 52:

25 Տե՛ս **Գարբինեան Ռ.**, Բոլշևիկեան ձիրաններուն մէջ (Անցեալի յուշերէս փրցուած էջեր), (Բ), էջ 23:

26 Տե՛ս Բոլշևիկ կառավարութեան կարապի երգը, «Ազատ Հայաստան», Եր., 1921, փետրուարի 20, N 2:

27 Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Գ տպ., Թեհրան, 1982, էջ 526-527:

28 **Ալյան Ստեփանեանի** յուշերը, գրի առաւ՝ **Հայկ Աճեմեան**, Թեհրան, 1966, էջ 377:

29 Տե՛ս **Աֆրիկեան Վ.**, Համազասպը (Մի էջ նրա կենսիցի), (Է), «Յուսաբեր», Գահիրէ, 1929, ԺԵ տարի, հուլիսի 4, N 80, տե՛ս նաև **Կոստյան Հ.**, «Բանտի քարերն էին աղաղակում», էջ 51, տե՛ս նաև **Իշխանեան Բ.**, Երկու ամիս բոլշևիկեան բանտում, էջ 159:

մարդախոշոր արարուածը վարողն էր յայտնի սաղիստ Աւիս Նուրիջանեանը»<sup>30</sup>: Թեև բանտի վարչությունը միջոցներ էր ձեռնարկել հրացանազարկերը քաղաքում լսելի չդառնալու համար, այդուհանդերձ կրակոցների ձայները տարածվել էին շուրջ բոլոր: Նույն ժամանակ չեկայի բանտում գտնվող Հովհ. Քաջագունին վերհիշում է. «Գիշերը – 16-ից լույս 17-ը – հրացանաձգութեան ձայներ լսեցինք: Չէիք կարող որոշել թե՛ որ կողմից: Շատ խուլ ու անկանոն մէկ արագանում էին, շատանում, խառնում իրար, մէկ հատ-հատ լսում կամ ընդհատում:

Հրացանաձգութիւնը տևեց մի ամբողջ ժամ, գուցէ և ավելի – գոնէ մեզ այդպէս թուաց:

Առաւօտեան պահակների կցկտուր խօսքերից իմացանք թէ... կենտրոնական բանտում շատ մարդ կտոտրել են:... Կտոտրել են յանկարծակի, հէնց բանտարկութեան սենեակների մէջ: Վանդակաւոր պատուհաններից «զայլերով» – համազարկերով – կրակ են բաց արել ներս, սպանել են անխտիր, անխնայ... Շատերին կտոտրել են կացիներով...»<sup>31</sup>:

Այդ օրվա գնդակահարվածներից էին արձեշցի հին հայդուկներ Մուրադ և Մուշեղ Հարությունյան եղբայրները<sup>32</sup>: Գնդակահարվածների մեջ էր նաև Ղարաքիլիսայի ճակատամարտի հերոս, գնդապետ Նիկ. Ղորղանյանը: Հ. Կոստյանը վերհիշում է գնդակահարվելուց առաջ ռուսերենով արտաբերած նրա վերջին խոսքերը. «Մովետական իշխանութեան ոհմակներ, ինչո՞ւ նամարդ կերպով գնդակահարում էք մեզ: Ռուս հայրենիքի համար մարտնչել եմ գերմանական, աստրիական ճակատներում, կուել եմ տաճիկների դէմ Հայաստանի համար, այս պիտի լինի վարձատրութիւնը, էլ շուններ, հրէշներ... »<sup>33</sup>:

Սպանող դադարում է միայն առավոտյան ժամը 6-ին, որից հետո «բանտից յաղթական դղրդոցով հեռացաւ օտոմօրիլը, տանելով իր հետ ռուս զինուորներին»<sup>34</sup>: Բեռնատարներով և սայլերով բանտից դուրս են տարվում նաև գնդակահարվածների մի մասի դիակները<sup>35</sup>:

Փորձենք ձտտել փետրվարի 16-ի լույս 17-ի զոհերի իրական թիվը: Նշենք, որ ականատեսների հուշերում և ժամանակի մամուլի հրապարակումներում առկա են հակառակական և իրարամերժ տվյալներ: Այսպես՝ չեկայի և «Հատուկ բաժնի» կողմից փետրվարի 15-ին կազմված ցուցակում նշվում է 21 հոգի<sup>36</sup>: Նույն թիվն են վկայաբերում նաև Բ. Իշխանյանը<sup>37</sup> և Ա. Աստվածատրյանը<sup>38</sup>: Զ. Յոյանը<sup>39</sup> և բժ. Հովհ. Մելիքյանը<sup>40</sup> նշում են 22, իսկ Հ. Կոստյանը՝ 24<sup>41</sup>: Բաշգառնեցի Մարտիրոսն իր հուշերում նշում է 25<sup>42</sup>: Փետրվարի 17-ի և 18-ի զոհերի թվի վերաբերյալ տվյալներ է հաղորդում նաև Օ. Բոլդուինը, համաձայն որի ամսի 17-ին սպանվել էր 50, իսկ 18-ին՝ 25 հոգի<sup>43</sup>: Ակնհայտ է, որ հեղինակի մոտ թվերի տեղը թյուրիմացաբար փոխվել է:

Արդ, ի՞նչ եզրակացությունների կարելի է հանգել: Հարցի քննության տեսանկ-

30 Կոստյան Հ., «Բանտի քարերն էին աղաղակում», էջ 51:

31 Քաջագունի Յովհ., Յետ մահու, էջ 82:

32 Կոստյան Հ., «Բանտի քարերն էին աղաղակում», էջ 50-51:

33 Նույն տեղում, էջ 50:

34 Իշխանեան Բ., Երկու ամիս բոլշեիկեան բանտում, էջ 167:

35 Տեն Բիզանդ Է., Հայուհիները Երևանի «Չեկայ»-ի բանտում (II), էջ 50:

36 Տեն Բոլշեիկ կառավարութեան կարապի երգը, «Ազատ Հայաստան», Եր., 1921, փետրվարի 20, N 2:

37 Տեն Իշխանեան Բ., Երկու ամիս բոլշեիկեան բանտում, էջ 157, 167-167:

38 Տեն Աստուածատրեան Ա., Բաշլիի Իշխանեանի հետ Երևանի բանտում (II), «Հայրենիք», Պոսթըն, 1936, ԺԳ տարի, հոկտեմբեր, N 12, էջ 108:

39 Տեն Աշխատունի Զ. [Զաքար Յոյան], Դրուագներ մեր ազատութեան պայքարից (I), «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, յուլիս, N 9, էջ 134:

40 Տեն Դարբինեան Բ., Կեանքիս գրքէն (Վեցերորդ մաս. Դէպի Հայաստան), էջ 564:

41 Տեն Կոստյան Հ., «Բանտի քարերն էին աղաղակում», էջ 48:

42 Տեն Հայրապետեան Եր., Փետրուարեան ապստամբութիւնը (Բաշգառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), (9), «Հայրենիք», Պոսթըն, 1956, ԼԳ տարի, հոկտեմբեր, N 10, էջ 78:

43 Տեն Պոլտունի Օ., Վեց բանտ և երկու յեղափոխութիւն: Արկածախնդրութիւններ Անդրկովկասի ու Անատոլիոյ մէջ 1920-1921: Թարգմանիչ՝ Շարաբ Ա. Ստեփանեան, Աղեքսանդրիա, 1933, էջ 128:

յունից կրկին անդրադառնանք չեկայի և «Հատուկ բաժնի» կողմից փետրվարի 15-ին կազմված գնդակահարվողների ցուցակին, որը Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո տպագրվել է նաև «Հայրենիքի փրկության կոմիտե»-ի պաշտոնաթերթը «Ազատ Հայաստան»-ում: Ցուցակում նշված են հետևյալ անձիք. **Տրանտ Տեր-Մարգարյան, Լևոն Գաբրիելյան, Մուրադ Հարությունյան, Մուշեղ Հարությունյան, Սամո Առաքելյան, Սուքիաս Առաքելյան, Գրիգոր Աղաբաբյան, Մանուկ Խաչատրյան, Ալեքսեյ Ֆեոդորով, Ալեքսեյ Միխայելով, Խաչատուր Քուրդենյան, Նիկոլայ Ղորղանյան, Կամսար Քոչարյան, Լևոն Ենգիբարյան, Երանոս Թարվերդյան, Թորոս Մուրադխանյան, Վարդան Թամրազյան, Արսեն Արագյան, Արամ Օրդոյան, Նիկոլայ Բոգդանյան, Գալուստ Քեմանջյան**<sup>44</sup>: Սակայն փաստերը հավաստում են, որ ցուցակում ընդգրկված 21 հոգուց բացի, փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը սպանվել են ևս չորս հոգի, և հասկանալիորեն նրանց անունները տեղ չէին կարող գտնել նախապես կազմված այն ցուցակում, որը Փետրվարյան ապստամբությունից հետո հայտնվել էր «Հայրենիքի փրկության կոմիտե»-ի ձեռքին: Այսպես՝ Բաշգառնեցի Մարտիրոսն իր հուշերում վկայում է, որ Քանաքեռում փետրվարի 17-ի գիշերը շրջանապետի գրասենյակից վերցրել է սպանվածների 25 հոգուց բաղկացած ցուցակը, որի առաջին տողում նշված էին դավաբեցի **Հեռանոս Տեր-Գևորգյանը**, օդուրբեզլեցի(այժմ Բերքանուշ) **Վարանդյան** և մեհրաբլեցի(այժմ՝ Վարդաշեն) **Ավոն իր երկու տղաների** հետ<sup>45</sup>: Ընդ որում, նրանց անունների դիմաց գրված է եղել. «Մարտիրոսի կուրիերներ - սուրհանդակ»<sup>46</sup>: Ուրեմն՝ բերված տվյալների և փաստերի համակողմանի ուսումնասիրությունը բերում է այն հետևության, որ առավել համոզիչ է Բաշգառնեցի Մարտիրոսի վկայակոչած տվյալը, այն է՝ 25:

Նշենք, որ այդ օրերին Երևանի կենտրոնական բանտից բացի ՀՅԴ գործիչների և անվանի հայորդիների գնդակահարություններ տեղի ունեցան նաև Հայաստանի բոլոր մյուս բանտերում: Իր բռնարարքներով և գործած քստմունքի գործողություններով ետ չէր մնում Ղարաքիլիսայի հեղկոմը: Փետրվարի 16-ին Ղարաքիլիսայում բանտ տանելու ճանապարհին գնդակահարվում է երիտասարդ դաշնակցական **Արծվիկ Արովյանը**<sup>47</sup>: Նույն օրը Ղարաքիլիսայի բանտում գազանային մոլուցքով սրախողխող են արվում մի շարք բանտարկյալներ, որոնց թվում էին դաշնակցական ուսանող **Գ. Կիրակոսյանը** և տեղի ՀՅԴ կոմիտեի անդամ 60-ամյա **Նատալյա Ամիրխանյան-Մուրադյանը**, ով իր գործունեությամբ մեծ հարգանք և ժողովրդականություն էր վայելում Ղարաքիլիսայում և նրանից դուրս<sup>48</sup>:

Փետրվարի 17-ի առավոտյան Երևանում կայծակի արագությամբ գուժեց գանգվածային գնդակահարությունների և սպանդի չարագուշակ լուրը, որի մասին շուրջներ էին միայն լսվել մինչ այդ: «Փետրուարի 17-ին,- գրում է Զ. Յուլյանը,- առաւօտեան «Օրիանտ»<sup>49</sup> հիւրանոցի մուտքի դրանը փակցուած էր Չեկայի կողմից Երևանի բանտում 22 գնդակահարուած բանտարկեալների ցանկը, որի մէջ Չեկան սպառնում էր նաև ենթարկել սպանուածների վիճակին այն բոլոր քաղաքացիներին, որոնք կը յանդգնին մասնակցել «հակայեղափոխական» շարժման՝ Սովետական իշխանութեան դէմ»<sup>50</sup>: Գնդակահարվածների ցանկը տեսնելուց հետո ժողովրդի ատելությունը տիրող ռեժիմի նկատմամբ էլ ավելի է սաստկանում: Բնականաբար

44 Տե՛ս Բօլշևիկ կառավարութեան կարապի երգը, «Ազատ Հայաստան», Եր., 1921, փետրուարի 20, N 2: 45 Տե՛ս **Հայրապետեան Եր.**, Փետրուարեան ապստամբութիւնը (Բաշգառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), (9), «Հայրենիք», Պոսթըն, 1956, ԼԴ տարի, հոկտեմբեր, N 10, էջ 78:

46 Նույն տեղում:

47 Տե՛ս **Գիւլիսանդանեան Ա.**, Յեղափոխական հայուհիներ, մաս Ա., Փարիզ, 1939, էջ 22:

48 Տե՛ս նույն տեղում, էջ 23, տե՛ս նաև **Գիւլիսանդանեան Ա.**, Նատալյա Ամիրխանեան-Մուրադեան (Յեղափոխական ալպոմ: Ազատագրական պայքարի յուշամատեն), հատ. Ե, N 5, Պէյրոս, 1964, էջ 145-147:

49 Հին Երևանի ամենահայտնի՝ «Օրիանտ» հյուրանոցը գտնվել է հետագայի «Սևան» հյուրանոցի քարտու: Տե՛ս **Հակոբյան Թ.**, Երևանի պատմությունը (1879-1917 թթ.), Եր., 1963, էջ 359:

50 **Աշխատունի Զ. [Զաքար Յույան]**, Դրուագներ մեր ազատութեան պայքարից (I), էջ 134-135:

այդ ամենը չէր կարող պատճառ չդառնալ արդար ցասման՝ մարդկային իր իրավունքներն ու ազգային արժանապատվությունը վերականգնելու համար: Ուստի ապստամբական ուժերի առաջնային խնդիրը կենտրոնական բանտի ազատագրումն էր, քանզի փետրվարի 16-ի լույս 17-ի սպանդից հետո չեկան որոշել էր հաջորդ օրերին գնդակահարել և կացնահարել ևս 300 հոգու<sup>51</sup>: Սպառնալի վտանգի մասին Ս. Վրացյանի՝ փետրվարի 17-ի երեկոյան բաշգառնեցի Աբգար Քոչարյանի միջոցով Առինջ գյուղում գտնվող Բաշգառնեցի Մարտիրոսին ուղարկած նամակում ասվում էր. «Սիրելի Մարտիրոս, երէկ գիշեր բանտում մեր ընկերներից բաւականին կոտորեցին: Նոյնը կրկնուելու է նաև այս գիշեր: Խնդրում են ոչ մի միջոցի առաջ կանգ չառնես, յարձակուես հէնց այս գիշեր և Երևանը գրաւես, որով գոնէ փրկել կարող ենք ընկերների մի մասին»<sup>52</sup>: Ի պատասխան Մարտիրոսի՝ Երևանում տեղի ունեցող իրադարձությունների մասին հարցմանը, նամակաբերը տեղեկացնում է հետևյալը. «Երէկ գիշերը բանտում կացնահարել են մեր ընկերներից շատերին: Նոյն կոտորածը շարունակուելու է նաև այս գիշեր: Անցեալ ամբողջ գիշերը Երևանը սարսափի տակ էր ու արթուն: Բանտի կողմից լաւում էին շարունակ են համազարկների անընդհատ ձայները, են կոտորուողների ահաւոր ճիչերն ու աղիւղորմ աղաղակները»<sup>53</sup>:

Թեև բոլշևիկյան իշխանությունն ու զորքը անկարող եղավ դիմակայել ապստամբական ուժերին, սակայն մինչ Երևանից փախուստը նրանք հասցրեցին հերթական աննկարագրելի ոճիրը կատարել: Փետրվարի 17-ին, հինգշաբթի օրը, մահաշունչ և տագնապալի կեսգիշերին Ավիսի դեկավարությամբ և նրա անմիջական հրահանգով սպանդանոցի վերածված կենտրոնական բանտում վերակալվում են գնդակահարություններն ու կացնահարությունները:

Ժամանակին ՀՀ բանակում ծառայության անցած բրիտանացի սպա Օ. Բոլդուինը, ով եղել է Երևանի կենտրոնական բանտը գրավող ապստամբական ուժերի կազմում, իր հուշերում վկայակոչում է մի կարևոր տեղեկություն այն մասին, որ փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերվա զարհուրելի սպանդն իրագործած բոլշևիկ կոմիսարներից իր վայրագությամբ և արյունալի գործողություններով աչքի է ընկել հատկապես ոմն **Կրեա ռուսանդ**<sup>54</sup>, որն անձամբ է իրականացրել ոճիրը: «Տասներեթի գիշերը,– գրում է Օ. Բոլդուինը,– այնքան շատ թուով բանտապահ տարած էին ստուարացնելու համար կռուող շարքերը, որ փոքրիկ հրեայ կոմիսարի մը ձգուած էր միւսներու գնդակահարումը կարգադրելու գործը»<sup>55</sup>: Ըստ Օ. Բոլդուինի նկարագրածի՝ այդ ողորմելին ունեցել է «կարճահասակ, թառամած, սապատող, մօրուսատոր ու ակնոցատոր»<sup>56</sup> տեսք: Օ. Բոլդուինի կողմից նոդկանքով նկարագրված այդ հրեա կոմիսարին կարելի է վերագրել նաև բոլշևիկների գործած ոճիրների ականատես էլեն Բուզանդի տված «սպայի համազգեստով ճղճիմ մարմնով, ծաղկատար դէմքով... «Չեկա»–ի հսկիչ կոմիսարը»<sup>57</sup> բնութագրականը:

Հակված ենք կարծելու, որն խոսքն այստեղ վերաբերում է Արտ. Չիլինգարյանի մատնանշած ներգործող կոմ Ի. Դովլաթյանի օգնականի և «Հեղափոխական տրիբունալ»-ի անդամի պաշտոնով Բաքվից Երևան ժամանած **Բանդուս** ազգանվամբ

51 Տեն Ասլան Ստեփանեանի յուշերը, էջ 378:

52 **Հայրապետեան Եր.**, Փետրուարեան ապստամբութիւնը (Բաշգառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), (8), «Հայրենիք», Պոսթըն, 1956, ԼԳ տարի, սեպտեմբեր, N 9, էջ 55:

53 Նույն տեղում:

54 Արտ. Չիլինգարյանի (Ռ. Դարբինյան) հայտնած տեղեկության համաձայն՝ այդ հրեան եղել է ռուսանոդ, ով արդարադատության կոմիսար Ս. Բաղդադյանի, չեկայի անդամ Ն. Բեկզադյանի և հաղորդակցության, փոստի և հեռագրի կոմիսար Ռ. Ոսկանյանի հետ միասին եկել էր Բաքվից և Երևան մեկնելու ծանապարհին Դիլիջանից ուղեկցել է Դարաքիլիսայի մոտ ձեռքակալված և Երևան տարվող Հ. Օհանջանյանի խմբին: Տեն **Դարբինեան Ռ.**, Կեանքիս գրքէն (Վեցերորդ մաս. Դէպի Հայաստան), էջ 539:

55 **Պոլտուին Օ.**, նշվ. աշխ., էջ 128:

56 Նույն տեղում, էջ 139:

57 **Բուզանդ Է.**, Հայուհիները Երևանի «Չեկայ»-ի բանտում (II), էջ 42:

հրեա ուսանողին: Վերջինս Ի. Դովլաթյանի կողմից դեռևս 1920 թ. դեկտեմբերի 18-ին տրված հատուկ մանդատով լիազորված էր կատարել խուզարկություններ և ձերբակալություններ: Մանդատում հատկապես շեշտվում էր. «Խորհրդային բոլոր հիմնարկություններին հրահանգում է լայն աջակցություն ցույց տալ ընդ. [կեր] Բանդուսին իրեն յանձնարարման գործի կատարման ընթացքում»<sup>58</sup>: Ուշագրավն այստեղ այն է, որ Բանդուսին նույն բովանդակությամբ տրված ռուսերենով մանդատը գրված է Ադրբեջանական ՍՍՀ-ի «Հեղափոխական գերագույն տրիբունալ»-ի նախագահի բլանկի վրա («А.С.С.Р. Председатель Верховного Революционного Трибунала. Совершенно секретно»)»<sup>59</sup>: Բլանկն անտարակույս Բանդուսին իր հետ բերել էր Բաքվից, ինչը փաստում է, որ այդտեղ նույնպես նա եղել էր «Հեղափոխական գերագույն տրիբունալ»-ի անդամ:

Քանի որ հայ բանտապահները կտրականապես հրաժարվում են կատարել սպանողն անմիջականորեն կազմակերպող հրեա կոմիսարի հրահանգները, ուստի ռճրագործությունները սկսելուց առաջ, վերջինս հայերի փոխարեն ռճիրին մասնակից է դարձնում իրենց զինակից թաթար բոլշևիկներին<sup>60</sup>: Արտ. Չիլինգարյանը վկայում է, որ «...ռճիրը գործադրելու օրերուն, բոլշևիկները պարզապէս չէին կրնար վստահիլ ռուս կամ հայ զինուորներուն, որոնք կրնային ենթարկուիլ մեր ազդեցութեան: Ուստի՝ աւելի ապահով էին նկատած այդ օրերուն ունենալ թուրք պահակներ, որոնք աւելի վստահելի էին սովետական իշխանութեան այդ յատուկ նպատակի համար: Միայն չէինք: Նոյն գիշերն իսկ սկսաւ սպանողը»<sup>61</sup>:

Բանտի վարչությունը նախորդ օրվան պես, չեկայից նախապես ուղարկված գնդակահարվողների ցուցակով սկսում է շրջայց կատարել բանտախցերում և խմբերով դուրս կանչել բանտարկյալներին<sup>62</sup>: Հ. Կոսոյանը վկայում է, որ փետրվարի 17-ի լույս 18-ի սպանողը տեղի է ունեցել մի քանի փուլերով: Առաջին ցուցակում ընդգրկված է եղել 16 հոգի: Ավելին՝ ի տարբերություն նախորդ օրվա, փետրվարի 17-ի լույս 18-ի կոտորածը չի սկսվում գնդակահարություններով: Չեկան և բանտի վարչությունը «արյունոտ բաքոյան խնջույքը» սկսելուց առաջ նենգաբար որոշել էին գնդակահարություններից զատ էլ ավելի վայրագ մեթոդով՝ կացնահարությամբ սպանել մնացած բանտարկյալներին: Սպանողը սկսելուց առաջ չեկան և բանտի վարչությունը այդ նպատակով չարամտորեն բանտ էին բերել «Ղանթարի» շուկայի թաթար մսագործին, ով իբրև վարձկան մարդասպան պետք է մասնակցեր կացնահարմանը<sup>63</sup>: Ինչպես վկայում է ակնատես-վկա Հ. Կոսոյանը՝ «սպանիչները ընտրուած էին թաթարներից»<sup>64</sup>:

Չեկայի հրոսակները, մտնելով խցեր, սկսում են կացնահարել քնած վիճակում գտնվող բանտարկյալներին: Սպանողի մղձավանջն անձամբ կրած բժ. Հովհ. Մելիքյանի հավաստմամբ՝ «Ոչ նման նախորդ գիշերուան, երբ հրացաններով և ստրճանակներով էին սպանում իրենց գոհերը, այդ գիշեր կացիններով էին սպանում, որպէսզի ձայնը դուրս չգար և բանտի խաղաղությունը չխանգարուէր... Ես լսում էի կացինների խուլ հարուածները, դիակների գետին նետուելու խուլ ձայնը»<sup>65</sup>: Այդ օրվա զագրելի ռճրագործության կազմակերպիչ-մասնակիցներից էր նաև մեկ այլ բորենի՝ Հայիեղկոմի արդարադատության թուրք կոմիսար Սուլեյման Նուրին, ով հազուրդ տալով իր ցեղի հայատյաց բնագղին՝ Հայիեղկոմի օժանդակությամբ և քա-

58 ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 2, թ. 82:

59 Նույն տեղում, թ. 81:

60 Տե՛ս Պոլտոլին Օ., նշվ. աշխ., էջ 128:

61 Դարբինեան Ռ., Կեանքիս գրքէն (Վեցերորդ մաս. Դէպի Հայաստան), էջ 563:

62 Տե՛ս Աստուածատրեան Ա., Երևանի բանտում: Փետրուարեան ապստամբութեան նախօրեակին, «Հայրենիք», Պոպոբն, 1964, նոյեմբեր, N 11, էջ 17:

63 Տե՛ս Զատիկյան Հ., Դահիճը հպարտանում էր..., «Երկիր», Եր., 2003, օգոստոս 29-սեպտեմբերի-4, N 59:

64 Կոսոյեան Հ., «Բանտի քարերն էին աղաղակում», էջ 52:

65 Դարբինեան Ռ., Կեանքիս գրքէն (Վեցերորդ մաս. Դէպի Հայաստան), էջ 565-566:



ջալերությամբ թաթար մագործի<sup>66</sup> հետ միասին շարունակում էր երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը<sup>67</sup>:

Կացնահարություններից բացի իրականացվում էին նաև գնդակահարություններ: Առաջին գնդակահարվածների մեջ էր ՀՀ բանակի սպա սեբաստացի **Վարդան Թեղլյանը (Վ. Բակուր)**: Հ. Կոտյան, ցավով նշում է, որ նրան բանտախցից դուրս տանող բոլշևիկը եղել է հայ գրող-մանկավարժ Ղազարոս Աղայանի որդին՝ Մուշեղ Աղայանը<sup>68</sup>: Գրականության և արվեստի թանգարանի ձեռագրատան արխիվում

66 Որ բոլշևիկները սպանդին մասնակից էին դարձրել նաև թաթար վարձկան մագործին, հաստատվում է իրական փաստով: 2003 թ. հուլիսին Երևանի բնակիչ Նիկոլայ Խաչատրյանը պատմաբան և արձակագիր Հովհաննես Զատիկյանին վկայել էր հետևյալը: Ն. Խաչատրյանի պատմելով՝ իր հայրը՝ Լիպարիտ Խաչատրյանը, խորհրդային տարիներին աշխատել է Մասիս երկաթուղային կայարանում որպես տոմսավաճառ: Լինելով գրուցասեր և անմիջական անձնավորություն՝ նշտապես նրա մոտ էին հավաքվում կայարանի աշխատակիցները: Ըստ Ն. Խաչատրյանի՝ «Այդպիսի գրուցներին մեկի ժամանակ էլ, երբ հայրս մեղադրանքներ ներկայացրեց Դաշնակցությանը, հորս գրուցակիցը՝ թուրք Թաիրը, բարձրացավ տեղից, կանգնեց ուղիղ հորս առաջ ու ասաց «Լիպարիտ, ես նրանց հախից եկել եմ 1921 թ. փետրվարի 17-ի գիշերը: Հայրս ու ես սևեռուն նայեցինք թուրքին: Երկար լռությունից հետո հայրս հարցրեց. «Ո՞նց»:

Թուրքը ուղղեց բեղերը, հայարտ կեցվածք ընդունեց և պատմեց. «Փետրվարի 17-ի երեկոյան կողմ ինձ մոտեցան երկու մարդ և ասացին. «Տապող վերցրու և հետևիր մեզ, մեր պետք քեզ կանչում է»: Ղանթար շուկայում գտնվող իմ մսավաճառի խանութը փակեցի ու գնացի: Ինձ տարան Երևանի բանտ: Պետք կարգադրեց կերակրել, խմեցնել ինձ...: Ուշ գիշերին բացեցին խցի դուռը, ինձ տապոս տվեցին: Տապոսը սրելուց հետո մի քանի հոգով գնացինք «քաղաքականների» խուցը: 50-60 հոգի կլինեին, կեսը լավ ծեծված, մյուսները՝ քնած: Ինձ բացատրեցին անելիքս, և ես սկսեցի: Նրանցից մեկը, որին «մաուզերիստ Մուշեղ» էին ասում, արթնացավ, փորձեց քնածներին էլ արթնացնել, բայց իմ երկրորդ հարվածից հետո այլևս չկար: Մյուսը հաղթանդամ մարդ էր՝ դաշնակցական «քոռ Համոն»: Առաջին հարվածից հետո փորձեց բարձրանալ ու տապոսը խլել, բայց չեկիտները նրան գցեցին գետնին, երկրորդ հարվածից հետո գլուխը թռավ...»:

Հայրս, որ գունաթափված լսում էր, գոռաց. «Վերջ տուր...»: Թուրքը լռեց, բայց կանգնել ու նայում էր հորս: Թաիրը վերջապես հեռացավ: Վշտացած հայրս ինձ լսելի ասաց. «Մուշեղն ու Համոն մեր ազգի փեսաներն էին: Ասում էին, թե Սիբիր են արքտրել, բայց նրանց պարզվում է...»:

**Փետրվարյան ապստամբությունից հետո իշխանությունը կրկին զավթած բոլշևիկները Թաիրի կյանքը ապահովագրելու նպատակով նրան աշխատանքի էին վերցրել Երևանի կենտրոնական բանտում, ապա թոշակի ուղարկել և բնակեցրել Մասիս ավանում:** Ի դեպ, կովկասյան թաթարներն այդպես էլ չդավաճանեցին քնած ժամանակ մարդ կացնահարելու՝ իրենց ցեղի սովորությանը: 64 տարի անց՝ 2004 թ. փետրվարի 19-ին Բուդապեշտում ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում անգլերենի դասընթացների մասնակից հայ սպա Գուրգեն Մարգարյանը քնած ժամանակ զազանաբար կացնահարվեց արբբեջանցի «սպա» Ռամիլ Սաֆարովի ձեռքով: Մատոնական Բաքուն մարդասպանի այդ քայլը ոչ միայն արդարացրեց, այլև նրան հերոսացրեց:

67 **Արշակունի Ա. [Արշակ Հովհաննիսյան]**, Փետրուար 18-ի ապստամբությունը: Հայ հերոսական պատմության մի դրուագ, «Յուսաբեր», Գահիրե, 1949, ԼԳ տարի, փետրուար 19, N 275:

68 Տե՛ս **Կոտյան Հ.**, «Բանտի քարերն էին աղաղակում», էջ 53: Մուշեղ Ղազարոսի Աղայանը (17.11.1883, Թիֆլիս-11.9.1966, Երևան), մասնագիտությամբ եղել է երաժշտագետ, կոմպոզիտոր, ջութակահար և երգիչ (բարիտոն): Առաջին աշխարհամարտի ժամանակ թույլ տեսողության պատճառով ազատվել է զինվորական ծառայությունից: Քաղաքական ակտիվ գործունեությամբ զբաղվել է 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո: 1919 թ. հուլիսին վրաց մենշևիկյան իշխանությունները որպես բոլշևիկի ձեռքակալում են Մ. Աղայանին և նետում Օրթաձալայի բանտ: Ղազարոս Աղայանի ընտանիքի մտերիմ բարեկամ Հովհ. Թումանյանի երաշխավորությամբ Մ. Աղայանը մեկ ամիս անց ազատվում է բանտից, սակայն արտաքսվում է Վրաստանից: Հովհ. Թումանյանին հաջողվում է Մ. Աղայանին տեղափոխել տալ Հայաստան: Հաստատվելով Դիլիջանում Մ. Աղայանն այդտեղ երգեցողության դասեր է տվել տեղի դպրոցում: Հայաստանում ծագած 1920 թ. մայիսյան խռովության ժամանակ լինելով նրա ակտիվ մասնակիցներից՝ ձերբակալվել և դատապարտվել է գնդակահարության: Սակայն, դարձյալ Հովհ. Թումանյանի միջամտությամբ, պատիժը մեղմացվել է. այն փոխարինվել է չորս տարվա բանտարկության: Պատիժն անցկացրել է Դիլիջանի, ապա՝ Երևանի զինվորական բանտերում: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո (1920 թ. դեկտեմբերի 2) ազատվում է բանտարկությունից և նշանակվում Երևան քաղաքի և գավառի հեղկոմի անդամ: 1921 թ. Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո անցել է Ղամարլու: 1921 թ. սեպտեմբերի 1-ին եղել է Ղամարլուի Ցանկատի Յանուշևսկու անվան բոլշևիկյան ջոկատի 3-րդ

պահվող Մուշեղ Աղայանի ֆոնդում առկա է վերջինիս ինքնակենսագրականը, որում նա, անդրադառնալով 1920 թ. վերջերի և 1921 թ. սկզբների իր գործունեությանը, վկայում է հետևյալը. «1921 թվի փետրվարի 17-ի գիշերը ինձ տված լուրջ և պատասխանատու առաջադրանքը կատարելուց հետո (ընդգծումը – Գ. Ս.) ես մյուս ընկերների հետ միասին կազմակերպված կերպով անցնում եմ ֆրոնտ՝ Ղամարու... մասնակցում եմ բոլոր կռիվներին...»<sup>69</sup>: Հարց է ծագում. այդ ինչ «լուրջ և պատասխանատու» առաջադրանք էր կատարում Երևան քաղաքի և գավառի հեղկոմի անդամ Մ. Աղայանը փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը: Խոսքը տանք Հ. Կոստյանին, ով, բանտային դժոխային օրերի տրտմությունը սրտում, խորը կսկիծով փաստագրել է Վ. Թելլայանին բանտախցից դուրս տանելու և գնդակահարելու դրվագը: «Այս գիշեր իմ խցիկից տարան երկու հոգի ևս,– գրում է Հ. Կոստյանը,– որոնցից մեկը սեբաստացի Վարդան Բակուրն էր. սա տաճկական գեեհնից փրկուելով՝ եկել էր Հայաստան և ծառայում էր Հայաստանի բանակում, իբրև սպայ:

Վարդանին տարան հետևեալ ձևով.

«Մի գեղեցկադէմ երիտասարդ խցիկի դուռը բացեց և մտաւ ներս: Նա հագած էր չեկիստի տարագ, ձեռքին՝ տասնոց ատրճանակ:

Ամէնքս ահով սպասում էինք, թէ ո՞ւմ անունը պիտի տայ...

–Վարդան Բակուր, հաւաքիր գոյքերդ,– ասաց չեկիստը և սկսեց հայեացքը պտըտցնել մեզ վրայ:

Վարդան, ցնցուած, ոտի կանգնեց, զինուորական վերարկուն քաշեց ուսին, հագաւ ոտի մէկ կօշիկը, միւսը հագնելիս դժարացաւ, ձիգ էր գործ դնում ոտը մոցնելու: Այդ պահուն չեկիստը մօտեցաւ, բռնեց թևից, քաշեց տարաւ դուրս, կէս հագուած վիճակում: Մեր խցիկի բանտարկեալներից մէկը ասաց.

«Սա Ղազարոս Աղայեանի որդին է, անունը՝ Մուշեղ»:

Անցաւ մի քանի վայրկեան, դը՛նգ–դը՛նգ... լսուեց խուլ կրակոցի ձայն:

Ես իմ տեղում մրմնջացի՝ ապարմիտ Վարդան... փղձկացի ու լաց եղայ»<sup>70</sup>: Վարդանը գնդակահարվում է բանտի նկուղում փորված մահվան գուրի առջև<sup>71</sup>:

Հերթը **Համազասպին** էր, նրան ոչնչացնելու մոլուցքը կուրացրել էր արյունարբու Ավիսին: Գիշերվա ժամը 1:30-ին բանտապետ Ռ. Կարապետյանը և նրա օգնական Գաբրիելը, Բ. Իշխանյանի դիպուկ բնութագրմամբ՝ «գազանին մէկը, որ ստանձնել էր Գաբրիել հրեշտակի հոգեհան դերը»<sup>72</sup>, ութ զինված չեկիստների հետ միասին մտնում են Համազասպի բանտախուցը, արթնացնում նրան քնից և հրահանգում հագնվել<sup>73</sup>: Համազասպին նախ տանում են բանտապետ Ռ. Կարապետյանի աշխատասենյակը և հայտնում մահված վճիռը: Համազասպը պահանջում է, որպեսզի քնություն կատարեն, ասելով, որ «...առանց դատ ու դատաստանի ի՞նչպէս կարելի է մահուան վճիռ տալ»<sup>74</sup>: Տեսնելով, որ քնություն անցկացնելու իր պահանջն ու խնդրանքն ապարդյուն են անցնում, Համազասպը հարձակվում է իրեն շրջապատող արյունարբու չեկիստ ելուզակների վրա ու մի լավ ծեծում: Սակայն

վաշտի (հրամ. Ս. Բոգիմսկի) քաղդելը: 1935–1939 թթ. եղել է Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահը: 1939 թ. ստացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում: Ի դեպ, Մ. Աղայանի երկրորդ կինը Հովի. Թումանյանի Նվարդ դուստրն էր (տե՛ս ԳԱԹ, Մուշեղ Աղայանի ֆոնդ, գ. 1706, 1707, 1708, տե՛ս նաև **Թումանյան Ն.**, Հուշեր և զրույցներ, Եր., 1987, էջ 203–204, տե՛ս նաև Թումանյանի զավակները Աշխեն. Հուշեր և ընտանեկան պատմություններ: Խմբ.՝ Ն. Թուխիկյան–Խաչատուրյան, Եր., 2011, էջ 84, 122–123, 316, տե՛ս նաև **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ. 50, Եր., 2010, էջ 26, 251):

69 Մուշեղ Աղայան (Ինքնակենսագիրը): ԳԱԹ, Մուշեղ Աղայանի ֆոնդ, գ. 1706, էջ 31:

70 **Կոստյան Հ.**, Բանտի քարերն էին աղաղակում, էջ 53:

71 Տե՛ս **Կոստյան Հ.**, Վարդան Թելլալեան (Վ. Բակուր). 1895–1921 (Յեղափոխական ալպում: Ազատագրական պայքարի յուշամատենան), հատ. Ե, N 11, Պէյրուօ, 1965, էջ 325:

72 **Իշխանեան Բ.**, Երկու ամիս բօլշեփկեան բանտում, էջ 156:

73 Տե՛ս **Աֆրիկեան Վ.**, Համազասպ Երևանի բանտին մէջ (Յեղափոխական ալպում: Ազատագրական պայքարի յուշամատենան), Գ շարք, N 11, Պէյրուօ, 1962, էջ 336:

74 Նույն տեղում:



Երևանի կենտրոնական բանտում 1921 թ. փետրվարի 14-18-ին գնդակահարվածներն ու կացնահարվածները (Հայաստանի պատմության թանգարան: Նորագույն պատմության բաժնի ֆոնդ, ինվ. 389ա, 389բ, 389գ):

վրա հասած մեծաթիվ չեկիստները թափվում են նրա վրա. նրանցից երկու ժամ է պահանջվում վանեցի քաջագուն մարտիկին տապալելու, ձեռքերն ու ոտքերը կապելու համար, որից հետո թաթար ելուզակը մագործի կացնով ձեղքում է Համագասպի գլուխը<sup>75</sup>:

Իսկապես, անհնար է այս տողերը կարդալ առանց ներքին սարսուռի, քանզի Նիկ. Ղորղանյանը, և Համագասպը, և շատերը՝ մեծ ու ազնիվ ազգային գործիչների մի ամբողջ սերունդ, պատրաստ էին անգամ բոլշևիկների հետ իրականացնել սեփական հայրենիքի ակնկալվող վերածնությունը, բայց դարձան յաթաղանի գոհ բոլշևիկի և նրա զինակից թուրք-թաթարի ձեռքով:

Կենտրոնական բանտում չեկան շարունակում էր իր ոճրագործությունները, երբ ապստամբական ուժերը փետրվարի 18-ին՝ գիշերվա ժամը 1-ին, սկսեցին Երևանի վրա հարձակումը<sup>76</sup>: Մինչդեռ խորհրդային իշխանությունը ապստամբական ուժերի դեմ դիմադրողական մարտեր մղելուն զուգահեռ չեկիստ հրոսակների և նրանց զինակից թաթար ելուզակների միջոցով կենտրոնական բանտում ողջ գիշեր շարունակում էր բանտարկյալների սպանողը: Տեսնելով, որ կարճ ժամանակամիջոցում անգոր են ոչնչացնել բոլորին, առանձին-առանձին չգնդակահարելու և ժամանակ շահելու նպատակով բանտի վարչությունը 27 հոգու արագորեն տեղափոխում է գետնահարկի խցերից մեկը: Կանխագալով չեկիստների նպատակը, մահվան դատապարտված բանտարկյալները ներսից ամուր փակում են դուռը և փորձում դիմադրել՝ թույլ չտալով զինված չեկիստների մուտքը խուց: Վերջիններս սակայն դիմում են տմարդի քայլի. գնդացիները մոտեցնում են պատուհաններին և անգթորեն բոլորին կոտորում: Ականատեսները վկայում են, որ գնդակահարվելու պահին դաշնակցականներից ոմանք, ինչպես օրինակ Սենիկ Օհանջանյանը, պատուհանից մի վերջին անգամ հասցրել են գոչել «Կեցցե՛ Հ. Յ. Դաշնակցությունը»<sup>77</sup>:

Որոշ դադարից հետո՝ կեսգիշերին, ժամը 4-ին բոլշևիկ ոճրագործները ավելի բազմապատկված ուժերով վերսկսում են սպանողը: Այս անգամ 25 բանտարկյալներին գետնափոր մահաբեր խուց են տեղափոխում նրանց ոտքերն ու ձեռքերը պարաններով կապված վիձակում, որից հետո գնդացիները մոտեցնում են լուսամուտներին և գնդակահարում<sup>78</sup>: Նկարագրելով զարհուրելի այդ տեսարանը՝ Օ. Բոլդուիսը վկայում է. «...երկու արագահարուածներ կը մտեցնեն պատուհաններուն և կրակել կսկսին խուցին ներքնակողմը: Բանտարկեալները երեսի վրայ գետին կը տարածուին ու սողալէն պատուհաններուն տակը կուղղուին ապաստան գտնելու համար: Անոնց աղաղակները կը ձեղքէին օդը: Ապա, արագահարուածները խուցին միւս երեսը կը փոխադրեն ու այս անգամ ալ հակառակ կողմէն կրակ կը բանան հարուածելու համար պատուհաններուն մէջտեղերը ապաստանածները»<sup>79</sup>:

Ամենասարսափելիին սկսում է հետո, երբ ոճրագործները սառնասրտորեն ձեռնամուխ են լինում բանտարկյալների խոշտանգմանն ու հոշոտմանը: Կացիներով զինված խուց են ներխուժում բանտի այդօրվա դահիձ հրեա կոմիսարը և երկու թաթար՝ բոլշևիկների հետ միասին սկսում զազանաբար կացնահարել վիրավորներին, անգամ մահացածներին, ապա այլանդակված և հոշոտված մարմինները քարշ տալիս և նստում բանտի նկուղներում նախապես փորված հորերը՝ գուբերը<sup>80</sup>: Ի դեպ, ինչպես վկայում է Հովհ. Սահակյանը, արյան ծարավ ոճրագործները, հագուորդ տալով իրենց վայրագություններին, բանտարկյալներին սպանողի էին ենթարկել նաև հաստ սրածայր բիրերով և զնդաձև ծայր ունեցող մահակներով՝ լախ-

75 Տես նույն տեղում, տես նաև Բոլշևիկական գազանությունները, «Ազատ Հայաստան», Եր., 1921, փետրվարի 23, N 4:

76 Տես Զ., Անօրինակ խանդավառություն ազատագրած Երևանում, «Ազատ Հայաստան», Եր., 1921, փետրվարի 20, N 2:

77 Նույն տեղում:

78 Տես Պոլտուխ Օ., նշվ. աշխ., էջ 128:

79 Նույն տեղում:

80 Տես նույն տեղում:

տերով<sup>81</sup>:

Համագասպից և Վ. Թելլայանից բացի գնդակահարվածների և կացնահարվածների թվում էին ՀՅԴ գործիչներ **Սենիկ Օհանջանյանը, Վաղարշակ Գասպարյանը, քանվոր Սերգոն**, իգդիրցի հին հայդուկ **Արամ Հակոբյանը**, այլքսանդրասպուլցի հին հայդուկ **Արտաշես Շահիրարցյանը (Արտուշ խան)**, դամարյուեցի դաշնակցականներ **Գալոն և Կոլոտը**, հին հայդուկ բաշգառնեցի **Մակեդոն Հակոբջանյանը** և ուրիշ նշանավոր դեմքեր<sup>82</sup>... ազգային-ազատագրական շարժման անձնուրաց նվիրյալների մի փաղանգ, որոնցից ամեն մեկի կյանքը մի ուրույն պատմություն է: Բոլշևիկյան կացիների սպառնալիքի տակ էին Երևանի կենտրոնական բանտում խմբված հայ մտքի և ազգային-ազատագրական պայքարի ղեկավար ընտրանիի՝ Լ. Շանթի, Ն. Աղբալեանի, Հովհ. Քաջազունու, Հ. Օհանջանյանի, Ա. Սահակյանի, Ռ. Դարբինյանի, Ս. Արարատյանի և բազմաթիվ ուրիշների գլուխները:

Ուստի ապստամբական ուժերի կողմից բանտի գրավման գործողությունը սկսվում է փետրվարի 18-ին առավոտյան ժամը 5-ին՝ Ալան Ստեփանյանի առաջնորդությամբ Ջանգվի կամրջի կողմից և «Ն. Լ. Շուստով և որդիներ» ընկերության գինու-կոնյակի գործարանի ուղղությամբ սրընթաց հարձակումով: Եվ քանի որ լուսաբացին քաղաքի ծայրամասերում և հատկապես բանտի մոտակայքում արդեն լսելի էին դարձել ապստամբական ուժերի հրացանագարկերը, և մոտ էին Երևանի ազատագրումն ու բանտի գրավումը, բանտի վարչությունը շտապ կարգով բանտարկյալներին բաժանում է հիսնյակների, որոնք հերթով պետք է դուրս բերվեին և գնդակահարվեին<sup>83</sup>: Այդ ցուցակներում էին նաև Հ. Օհանջանյանը, Արտ. Չիլինգարյանը, գեներալ-մայոր Դ. Անդրեևսկին, Ս. Մելիք-Յոլչյանը, Վ. Աֆրիկյանը և շատ ուրիշներ<sup>84</sup>: «Ռոմիլեոն արագ և նոր պատրաստուած ցուցակ էր,- գրում է Հ. Կոտյանը,- գործադրողները չէին իմանում, թե՛ որ ելքական, որ խցիկումն է գտնուում: Դրա համար սկսուեց պրպտում և ստուգում»<sup>85</sup>: Իսկ ապստամբական ուժերը խաչաձև հարձակումով որքան մոտենում էին բանտին, շենքի ներսում և դրսում խուճապն ավելի էր մեծանում: «Բանտին մեջ և շրջակայքը,- գրում է Կ. Սասունին,- կը տիրէ մեծ շփոթ մը և կը դադրին մահ սփռողներու այցելութիւնները: Կոտորուելու դատապարտուած խմբակները, շունչերը կտրած, այժմ ականատես կը դառնան դուրսը տեղի ունեցող գոյամարտին, որ հետզհետէ պատերազմական բնոյթ կը ստանար»<sup>86</sup>:

Փետրվարի 18-ի առավոտյան ժամը 8-ին ապստամբ ուժերը տարբեր կողմերից սրընթաց մուտք գործեցին Երևան: Ժամը 9-ին Երևանն արդեն ազատագրված էր: Ժողովրդի գոհունակությունն ու ցնծությունը անասելի էր: Ապստամբական ուժերը զինված և անզեն բազմության հետ մեկտեղ գրավում են բանտը, կոտորատում երկաթյա դռների փականները և ազատում սպանդից փրկված 1700 ձերբակալվածներին<sup>87</sup>: Այսպիսով՝ Երևանի ազատագրումով և չեկայի, գինվորական և կենտրոնական բանտերի գրավումով հարյուրավոր մտավորականներ, քաղաքական ու գինվորական գործիչներ փրկվեցին վերահաս սպանդից, այլապես նրանք նույնպես արժանաւայր էին Համագասպի և նրա բախտակից ընկերների ճակատագրին:

Ընդհանուր առմամբ որքան է կազմել Երևանի կենտրոնական բանտում գնդակահարվածների և կացնահարվածների իրական թիվը: Նշենք, որ Աղասի Վերդյա-

81 Տե՛ս **Սահակեան Յովհ.**, նշվ. աշխ., էջ 171:

82 Տե՛ս **Կոտյան Հ.**, «Բանտի քարերն էին աղաղակում», էջ 38, 41, տե՛ս նաև **Հայրապետեան Եր.**, Փետրուարեան ապստամբութիւնը (Բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), (9), էջ 78:

83 Տե՛ս **Աֆրիկեան Վ.**, Համագասպ Երևանի բանտին մեջ (Յեղափոխական ալպոմ: Ազատագրական պայքարի յուշամատեն), էջ 336, տե՛ս նաև **Կոտյան Հ.**, «Բանտի քարերն էին աղաղակում», էջ 54:

84 Տե՛ս **Աֆրիկեան Վ.**, Համագասպ Երևանի բանտին մեջ (Յեղափոխական ալպոմ: Ազատագրական պայքարի յուշամատեն), էջ 336:

85 **Կոտյան Հ.**, «Բանտի քարերն էին աղաղակում», էջ 54:

86 **Սասունի Կ.**, Փետրուարեան ապստամբութիւնը (1921), էջ 122:

87 Տե՛ս **Աշխատունի Զ. [Զաքար Յոլչյան]**, Դրուագներ մեր ազատութեան պայքարից (I), էջ 135:

նի տվյալներով միայն փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը սպանդի է ենթարկվել 50 հոգի<sup>88</sup>: Այդ թիվն է մատնանշում նաև Օ. Բոլդուինը<sup>89</sup>: Հ. Իրազեկը գրում է, որ միայն փետրվարի 16-ին և 17-ին գոհ գնացին հիսունից ավելի բանտարկյալներ<sup>90</sup>: Խմբապետ Ասլան Ստեփանյանը նշում է, որ կացնահարվել էին ավելի քան վաթսուն հոգի<sup>91</sup>: Սպանդի ենթարկված բանտարկյալների թվի վերաբերյալ պարզություն է մտցնում Բաշգառնեցի Մարտիրոսի վկայակոչած տեղեկությունը, ըստ որի Քանաքեռում շրջանապետի գրասենյակում հաշվառված տվյալներով փետրվարի 16-ից սկսած կացնահարվել և գնդակահարվել էին 75 հոգի<sup>92</sup>: Հատկանշական է, որ Բաշգառնեցի Մարտիրոսի նշած թիվն է կրկնում նաև Օ. Բոլդուինը, ով եղել էր բանտը գրավող ապստամբական ուժերի մեջ: Ըստ նրա՝ «Այս անգամ ալ դէպի սանդուխները փութացինը կրկին ու անկէ ալ վար, ուր նոր փորում փոս մը գտնուեր էր: Ատր մէջն էին մնացեալները... ընդամենը եօթանասունըհինգ հոգի»<sup>93</sup>: Սակայն պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ մասնակի և խմբակային կոտորածները սկսվել էին տակավին փետրվարի 14-ի լույս 15-ի գիշերը, որին գոհ էին գնացել 18 հոգի: Ինչպես վկայում է բանտը գրավելուց հետո այնտեղ եղած Կ. Սասունին. «...սպանուածների մէջ գտնուեցին հին սպանուածներ, որոնք նետուած էին բանտի սենեակների տակ փորում և հորերի մէջ: Այդ հորերը լցուած էին տասնեակ դիակներով, որոնք հոտած էին...»<sup>94</sup>:

Այսպիսով՝ բերված տվյալների և փաստերի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ փետրվարի 14-18-ին Երևանի կենտրոնական բանտում բոլշևիկների կազմակերպած ռճրագործությունների գոհ է դարձել ավելի քան 93 հոգի:

Ապստամբության հաղթանակից հետո խորհրդարանի շենքում «Երևանի փրկության կոմիտե»-ի, խորհրդարանի և կառավարության նախկին անդամների մասնակցությամբ փետրվարի 18-ին հրավիրված՝ նիստում ստեղծվեց պետական իշխանության արտակարգ մարմին «Հայրենիքի փրկության կոմիտե» (ՀՓԿ)՝ Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանի նախագահությամբ<sup>95</sup>: ՀՓԿ-ի որոշմամբ ձերբակալվեցին և կենտրոնական բանտում հայտնվեցին բոլշևիկյան իշխանության ներկայացուցիչներից շատերը: Հատկապես ծանր դատաստան էր սպասվում Երևանի կենտրոնական բանտում փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը զարհուրելի սպանդն իրականացրած «ողորմելի տեսք մը ունեցող» հրեա կոմիսար Բանդուսին: Օ. Բոլդուինն իր հուշերում պատմում է, որ նա նախապես տարվել էր խորհրդարանի շենք, այնուհետև տեղափոխվել կենտրոնական բանտ: «Ժողովուրդին ակնարկներուն հետևելով, - գրում է Օ. Բոլդուինը, - ետիս դարձայ և դուռէն դուրս գալը տեսայ նոյնիքն գլխաւոր մարդասպանին, կարճահասակ, թառամած, սապատող, մօրուսաւոր ու ակնոցաւոր հրեայ մը: Երկու քովերէն մէջ մէկ սպայ կը յառաջանային ատրճանակնին անոր գլխուն դրած, ետևէն երկու ուրիշ սպաներ՝ իրենց մավզէր հրացանները բռնած միննոյն դիրքով, իսկ անոնց ետևէն ալ մէկ թնով հրամանատարը, իր ռուսական երկար կապոյտ վերարկուն հագած»<sup>96</sup>:

Ինչ դատավճիռ էր սպասվում հրեա Բանդուսին: Օ. Բոլդուինը վկայում է, որ սպանդի ենթարկված 75-ի հարազատները միահամուռ վճռել էին՝ «...հագուստնե-

88 Տե՛ս Վերդեան Ա., Յուշեր: Գրի առաւ՝ Հայկ Աճէմեան, Թեհրան, 1959, էջ 146:

89 Տե՛ս Պոլտուին Օ., նշվ. աշխ., էջ 128:

90 Տե՛ս Իրազեկ, Փետրուար 18 (Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան (1890-1950), Պոսթըն, 1950, էջ 316:

91 Տե՛ս Ասլան Ստեփանեանի յուշերը, էջ 382:

92 Տե՛ս Հայրապետեան Եր., Փետրուարեան ապստամբութիւնը (Բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), (9), էջ 78:

93 Պոլտուին Օ., նշվ. աշխ., էջ 127:

94 Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, նոյնբեր, N 1, էջ 99-100:

95 Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 528:

96 Պոլտուին Օ., նշվ. աշխ., էջ 139:

րը քարիւղով թրջելէ վերջ ողջ ողջ այրել զայն նոյն այն սենեակին մէջ՝ ուր գործած էր ան իր վայրագ ոճիրը»<sup>97</sup>:

Կարծատն եղավ 1921 թ. փետրվարին բոլշևիկյան կապանքներից փրկված հայ ժողովրդի ազատությունը. այն, ավաղ, տևեց շուրջ 44 օր: Խորհրդային գործառնաբար բոլշևիկյան Ռուսաստանի ռազմական օգնության շնորհիվ ապրիլի 2-ին վերագրավում են Երևանը և Հայաստանում վերահաստատում խորհրդային կարգերը<sup>98</sup>: Իշխանությունը կրկին վերցնելուց հետո Փետրվարյան ապստամբության դառը փորձը ստիպեց Ալ. Մյասնիկյանի խորհրդային նոր կառավարությանը առժամանակ վերանայել իր կոշտ ու կամայական քաղաքականությունը և նախընտրությունը տալ «մեղմ» գործելակերպին: Ժողովրդի աչքին իրենց կորցրած հեղինակությունը վերականգնելու և վատախոսություն ներշնչելու նպատակով բոլշևիկներն առաջին հերթին ձեռնամուխ եղան չեկայի և Երևանի կենտրոնական բանտերում փետրվարի 14-18-ին իրագործած արյունոտ արարքների հետքերը թաքցնելու և պատմական իրողությունները հերքելու գործին: Զանգվածային գնդակահարությունների և կացնահարությունների փաստը չարակամորեն ժխտելու և հետագա պատասխանատվությունից խուսափելու նպատակով «Արտակարգ հանձնաժողով»-ը և «Հատուկ բաժին»-ը՝ հանձին Շ. Ամիրխանյանի և Ս. Մելիք-Հովսեփյանի, այդ դեպքերի մասին տարածվող լուրերը համարեցին սադրանքներ<sup>99</sup>:

Այդուհանդերձ, ժողովրդի զայրույթը մեղմելու նպատակով, աղաղակող փաստերի ճնշման ներքո ապրիլի 6-ին հրապարակվեց «Հակայեղափոխութեան, սպեկուլեացիայի և գեղծումների դէմ կուռղ Արտակարգ յանձնաժողովի և Յատուկ բաժանմունքի»<sup>100</sup> N 1 հրամանը, որում, սակայն, ինչպես որ պետք էր սպասել, միտումնավոր կեղծվում էր սպանդի ենթարկվածների իրական թիվը: Հրամանում ասվում էր. «Արտակարգ Յանձնաժողովը յայտնում է ի գիտութիւն բոլոր բանտրներին և գիւղացիներին, որ բոլոր դրանք անհիմն ստեր են: Արտակարգ Յանձնաժողովը և Յատուկ Բաժինը իրանց ամբողջ գոյութեան ընթացքում գնդակահարել են միմիայն 29 հոգի...»<sup>101</sup>: Չխորշելով նման քստմնելի արարքները ժողովրդի շահերը հետապնդողի դիմակով քողարկելուց, ոճրագործներն իրենց հանցավոր քաղաքականությանը գաղափարական հիմնավորում էին տալիս: Նրանք առաջ էին բերում իրականության հետ բոլորովին կապ չունեցող այն ստահող և հորինած պատճառաբանությունը, թե իբր սպանել են միայն «...սկտի սրիկաների, որոնք ոչնչի առաջ կանգ չէին առնում և ցանկանում իրանց երջանկությունը հիմնել միլիոնաւոր աղքատ և դժբաղդացած մասսաների հաշիւին...»<sup>102</sup>: Ցանկացած ողջամիտ մարդու համար ցինիզմի յուրօրինակ դրսևորում պետք է դիտվի կեղծարարության մեջ չափն ու սահմանը կորցրած՝ ապրիլի 6-ի վերոնշյալ հրամանում ՀՅԴ-ի հասցեին ստորաբար տարածված այն չարամիտ հերյուրանքը, թե իբր 29 գնդակահարվածներին «...կացիներով կտրատել են իրանք, դաշնակցականները և ցոյց տուել ժողովրդին պրովակացիոն նպատակներով»<sup>103</sup>: Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են:

Նշենք միայն, որ Ս. Վրացյանը, ով քաջածանոթ էր բոլշևիկների անօրինակ զրպարտություններին և ուրացումներին, «Կյանքի ուղիներով» հուշագրության «Վերջին խօսք» գլխում տեղին արձագանքել է. «**Բոլշևիկները մեզ դատապարտում են, որ այնքան հայ սպանուեցաւ քաղաքացիական կուռում մեր պատճառով...: Խորապէս ցաւում ենք, որ բայց ո՞վ եղաւ քաղաքացիական կուռի պատճառը: Մենք բանտերը նետեցինք հազարաւոր մարդկանց, որոնց գլխին կա-**

97 Նույն տեղում, էջ 162:

98 Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 544:

99 Տե՛ս «Կոնունիստ», Եր., 1921, ապրիլի 10, N 62:

100 Նույն տեղում:

101 ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 19, թ. 68:

102 Նույն տեղում:

103 ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 19, թ. 68:

խուել էր բոլշևիկեան կացինը, մենք կացնահարեցինք անմեղ մարդկանց...: Խորապէս ցաւում ենք, բայց եթէ Փետրուարեան ապստամբութիւնը տեղի չունենար, պական հայեր կը կոտորուէին բոլշևիկների ձեռքով...: Խորհրդային պատմագիրները և ժամանակագիրները անհուն սուտ ու զրպարտութիւններ են յօրինել մեզ ներկայացնելու համար իբրև «հայրենիքի դաւաճան»...: Եւ սուտն ու զրպարտութիւնը համեմուտ են պաշտօնական և անպաշտօն հայրոջանքներով, բայց հայտնի ճշմարտութիւնը այն է, որ հայրոջանքը տկարին զէնքն է: Մերկ իրականութիւնը այն է, որ հայ բոլշևիկները իրենք Հայաստան եկան, իբրև հայրենիքի դաւաճաններ, և իբրև միջազգային բոլշևիզմի գործակալներ, անհուն ոճիրներ գործեցին...(ընդգծումը մերն է-Գ.Ս.)»<sup>104</sup>:

**Գևորգ Ս. Ստեփանյան**– Գիտական ուսումնասիրություններն ընդգրկում են Գանձակ–Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում Օսմանյան կայսրության և մուսավաթական Ադրբեջանի կողմից 1918–1920 թթ. իրականացված հայերի ցեղասպանության, ինքնապաշտպանական մարտերի, Բաքվի նահանգի հայության ժողովրդագրության, հասարակական–քաղաքական պատմության հարցերը: Նշված թեմաներով հեղինակել է 5 մենագրություն: Զեկուցումներով բազմիցս հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

## Summary

### DEVELOPMENTS IN CENTRAL PRISON OF YEREVAN FROM 14 TO 18 FEBRUARY 1921

New details concerning the crimes committed by Armenian revolutionary committee

Gevorg S. Stepanyan

**Key words:** Armenian Revolutionary Committee, ARF Dashnaksutyun, the Cheka, arrest, Bandus, Vardan Tellalyan (V. Bakur), deprivation of liberty, Mushegh Aghayan, Hamazasp, Oliver Baldwin, hacked to death.

On December 2, 1920, at 13:00 the representatives of the government of Armenia Drastamat Kanayan (Dro) and Hambartsum Terteryan and the authorized representative of Soviet Russia – Boris Legrand signed an agreement consisted of an 8–points in Yerevan, by which the government of the country peacefully passed into the hands of Armenian Revolutionary Committee. According to the fourth and fifth points of the agreement, Russia and the Revolutionary Committee undertook not to use violence against the military structure, the former members of the government and the leaders of ARF Dashnaksutyun. But the Bolsheviks did not fulfill any of the points of agreement, their aim was to carry

104 Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատ. Զ, էջ 200, 206:



out regime change by civil war, bloodshed and the class struggle. As a result of the ongoing violence and arrests, in February 1921, the Cheka prison, as well as a the military prison and the central prison of Yerevan were full of political prisoners. On February 14, the Cheka began secret extrajudicial executions at the prison of Yerevan, thus many Armenian intellectuals and prominent figures of the ARF Dashnaktsutyun fell victim to it. February 16–18 were the worst days in the central prison in Yerevan. Cheka decided to begin executions and massacres in the night from 16 to 17 February. Bloody holiday was personally headed by Avis Nurijanyan, Suleyman Nuri – Turk by nationality, S. Amirkhanyan and Tatar butcher of Hantari market in Yerevan, whose name was Tahir. At night from 17 to 18 February the central prison turned into a slaughterhouse, executions and murders with an ax were recommenced. Among the victims were such priceless Armenian heroes of the national liberation struggle and prominent military figures as Hamazasp (Srvandztyants), Nick. Ghorghanyan, Makedon Hakobjanyan, Vardan Tellalyan – officer from Sebastia and others. Regarding the number of dead prisoners some clarifying information is provided by Martiros of Bashgarni: According to the data of Chief Bureau of Kanaker district, 75 people were shot and hacked to death.

## Резюме

### СОБЫТИЯ В ЦЕНТРАЛЬНОЙ ТЮРЬМЕ ЕРЕВАНА С 14 ПО 18 ФЕВРАЛЯ 1921 года

Новые подробности о преступлениях Ревкома Армении

Геворг С. Степанян

**Ключевые слова:** ревком, АРФ Дашнакцутюн, чека, арест, Бандус, Вардан Теллалян (В. Бакур), лишение свободы, Мушег Агаян, Амазасп, Оливер Болдуин, расстрел, убийство топором.

2 декабря 1920 года, в 13:00, в Ереване представителями правительства Армении Драстаматом Канаяном (Дро) и Амбарцумом Тертерьяном и уполномоченным представителем Советской России Борисом Леграном было подписано соглашение состоявшее из 8-и пунктов, по которому управление страной мирным путем проходило в руки к Ревкому Армении. Согласно 4-ому и 5-ому пункту соглашения Советская Россия и Ревком обязались не применять насилие по отношению к офицерскому составу Первой Республики, бывшим членам правительства и деятелям АРФ Дашнакцутюн. Но большевики не выполнили ни один пункт соглашения. Их целью было провести смену режима путем разжигания гражданской войны, кровопролития и классовой борьбы. В результате продолжающегося насилия и арестов, в феврале 1921 года тюрьма ЧК, а также Военная тюрьма и центральная тюрьма Еревана были полны политических заключенных. С 14-го февраля ЧК без

суда и следствия начало тайные расстрелы в Центральной тюрьме Еревана, жертвами которых пали представители армянской интеллигенции, армянского национально-освободительного движения и АРФ Дашнакцутюн. С 16 по 18 февраля были самыми тяжелыми днями в центральной тюрьме Еревана. ЧК решило возобновить расстрелы и резню в ночь с 16 по 17 февраля. Кровавый праздник лично возглавляли Авис Нуридджанян, Сулейман нури – турок по национальности, Ш. Амирханян и специально пригласенный татарский мясник рынка Хантари в Ереване – Таир. В ночь с 17 по 18 февраля центральная тюрьма превратилась в бойню, возобновились расстрелы и убийства топором. Среди жертв были герои армянской национально-освободительной борьбы и выдающиеся военные деятели Амазасп (Срвандзтянц), Николай Корганян, Македон Акопджанян, офицер из Себастии Вардан Теллялян и другие. Ясность о числе убитых заключенных вносит информация предоставленная хмбапетом Мартиросом из Баш-Гарни: по данным бюро начальника канакерского района было расстреляно и зарублено топором 75 человек.